

## ԿԱՐԾԻՔ

ՀՈՐԵՏԱ ԱՐՍՅԻ ԲԱԶԻԿՅԱՆԻ “ԱՆԴՐԱՇԱՌՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՌՉՈՒԹՅԱՆ  
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊԵՐԸ  
ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ (ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐՈՒՅՅԱՍԲ)” ԹԵՎՆԱԾՈՒԱԿԱՆ  
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լեզվաբանության թերևս առավել ուշագրավ խնդիրներից կարելի է համարել այնպիսիք, որոնք գտնվում են ձևաբանության, շարահյուսության և գործաբանության ուսումնասիրությունների խաչմերուկում և պահանջում են առավել բազմակողմանի և խորքային ուսումնասիրություն, քանզի ուղղորդում են այն դիտարկելու նշված բոլոր հայեցակերպերի լույսի ներքո: Նմանաբնույթ լեզվական երևույթների ուսումնասիրությունը է՝ լավելի է արժենություն, եթե վերջիններս ուսումնասիրվում են զուգադրական հարացույցում, որի նպատակն է վեր հանել և արձանագրել լեզվական զուգամետ և տարամետ հատկությունները, և ինչու չէ, ազգամշակութային իմաստույթները: Նման ուսումնասիրություններին կարելի է դասել գրախոսման ներկայացված ատենախոսությունը, որը նվիրված է անգլերենի անդրադարձ և փոխադարձ կառույցների գործառական և գործաբանական հայեցակերպերի ուսումնասիրմանը՝ հայերենի զուգադրությամբ, ինչն էլ միանշանակ ապահովում է աշխատանքի նորույթը: Զուգադրական բնույթի նմանատիպ ուսումնասիրությունները գիտական արժեք են ներկայացնում, քանզի հնարավորություն են ընձեռում բացահայտել ելակետային լեզվի ուսումնասիրության օբյեկտի ինքնատիպ առանձնահատկությունները, ինչպես նաև դրա զուգամետ և տարամետ հատկությունները երկու լեզուներում: Ավելին՝ նմանատիպ համադրական աշխատանքները հնարավորություն են ընձեռում ներթափանցել լեզվական երևույթների ազգամշակութային էության մեջ, վեր հանել մշակութակիր իմաստները միջմշակութային մակարդակի վրա: Վերջին հանգամանքը անշուշտ ապահովում է սույն աշխատանքի արդիականությունը:

Կառուցվածքային առումով, աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Աշխատանքի առաջին գլուխը՝ “Անդրադարձության և փոխադարձության կարգերի տեղը լեզվական համակարգում” նվիրված է նշված իմաստային կարգերի ժամանակակից լեզվաբանության մեջ տարբեր մեկնաբանումների և սահմանումների ուսումնասիրմանը: Տրոհված լինելով երեք ենթագլխի՝ աշխատանքի սույն գլուխը առանձին-առանձին անդրադարձում է անգլերենի բայասերի կարգի սահմանումների և դրանց շուրջ տարակարծություններին, բայասերի կարգի հիմնական և սահմանային տարատեսակներին,

դրանց իմաստային կարգերի ինքնատիպ հատկանիշներին և դրսկրումներին, անդրադարձության և փոխադարձության իմաստային կարգերի տարբերակիչ հատկանիշներին և սեռային ցուցիչներին: Սույն գլխի երրորդ ենթագիտում ատենախոսը անդրադառնում է հայ լեզվաբանության մեջ բայասեռի տեսակների դասակարգման սկզբունքներին և դրանց նկատմամբ տարբմբնումներին՝ հղում անելով հայագիտության ականավոր լեզվաբանների աշխատանքներին: Նշելի է, որ ատենախոսը բավականին հանգամանորեն քննարկում է թե՝ անգլիական բանասիրության, թե՝ հայագիտության մեջ տվյալ հարցի շուրջ կարծիքները: Ավելին՝ այս գլխի շրջանակներում բացահայտվում է նաև ատենախոսի սեփական մոտեցումը քննարկվող նյութի վերաբերյալ: Վերջում ատենախոսը իրավամբ եզրակացնում է, որ երկու լեզուներում էլ անդրադարձությունը և փոխադարձությունը բայական իմաստային միավորներ են իրենց տարբերակիչ հատկանիշներով, քանի որ «դրանք պարունակում են սեռային իմաստներից որոշ չափով տարբեր նշանակություններ» (Էջ 37):

Աշխատանքի երկրորդ գլուխը գալիս է իրականացնելու հետազոտության խնդիրներից մեկը, այն է՝ անցկացնել անդրադարձ կառույցների գործառական և իմաստագործարանական առանձնահատկությունների վերլուծություն: Ատենախոսը նախ ամփոփում է անդրադարձ կառույցների դասակարգման սկզբունքները երկու լեզուներում: Հիմք ընդունելով Թ.Փեյնի, Թ. Սիլոնիի, Ա. Բելիկովյայի աշխատություններում մշակված սկզբունքները՝ ատենախոսը բազմակողմանիորեն ներկայացնում է վերոհիշյալ կառույցների այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են անցողականության իմաստային արժույթը, քերականական արժույթը, դրանց նվազեցման աստիճանավորումը, անդրադարձ կառույցների բառային և վերլուծական տեսակները, դրանց միջև տարբերությունները: Անդրադարձ կառույցների գործարանական քննությունը կատարվում է “Հաստատուն” և “Հնարավոր” քերականության հիման վրա: Թ. Փեյնի, Ռ. Կարտերի և Ս.Մաքարթիի կողմից առաջարկած ներիմաստների լույսի ներո, մասնավորապես՝ «առօրյա գործողություն կատարելու կարողություն», «խնամքով կատարված գործողություն», «արտասովոր պայմաններում տեղի ունեցող գործողություն», «որևէ կերպարի նմանվելու գործողություն» ատենախոսը վերլուծում է երկու լեզուների համապատասխան կորպուսներից քաղված օրինակներ՝ վեր հանելով միջեզվական գուգածն և տարածել դրսորումները: Հարկ է նշել, որ ատենախոսը ինքը առաջարկում է անդրադարձ կառույցների նոր գործարանական իմաստները: Աշխատանքի այս գլխում քննության են առնվում նաև անգլերենի անդրադարձ դերանունները սաստկական գործառույթով: Մանրակրկիտ անդրադառնալով սաստկական դերանունների կառուցատիպերին՝ ատենախոսը վեր է հանում անգլերենի և հայերենի համապատասխան կադապարների միջև:

զուգամետ և տարամետ հատկանիշները, ճիշտ եզրակացնելով, որ անզերենում և հայերենում առկա են թե՝ ընդհանրություններ, թե՝ տարբերություններ:

Աշխատանքի երրորդ գլխի քննության նյութ է դարձել փոխադարձության կարգի կառուցվածքային և իմաստային-գործարանական առանձնահատկությունները: Նախ անդրադառնալով նշյալ կառուցների շարահյուսական դասակարգմանը՝ ատենախոսը բազմակողմանիորեն ներկայացնում է տարբեր լեզվաբանների դրույթները և սկզբունքները, որոնք հիմք են դարձել փոխադարձ կառուցների տեսակների և դրանից բխող եզրույթների համար: Այսպես՝ իր վերլուծության արդյունքում ատենախոսը առանձնացնում է փոխադարձ կառուցների հակադրության մեջ գտնվող տեսակների և եզրույթների մի ամբողջ համալիր, ինչպիսիք են՝ “բառային” և “վերլուծական”, «օրգանական» և “ոչ օրգանական”, “լիարժեք” և “ոչ լիարժեք”, “անվանական” և “բայական”, “միակազմ” և “երկկազմ”: Այնուհետև ատենախոսը զեղարվեստական գրականությունից, ինչպես նաև Բրիտանական և Արևելահայերենի ազգային կորպուսներից զետեղված տարբեր խոսքային իրավիճակներում ներկայացնում է փոխադարձ կառուցների գործառույթները, իրավիճակների մասնակիցների փոխարաբերությունները և փոխազդեցության տարբեր գործոնները: Այսպես՝ ատենախոսը ներկայացնում և մեկնաբանում է “անհամաշափ” և “համաշափ” հարաբերությունները և ներգործության տարատեսակները, ինչպիսիք են՝ “միախմբում”, “բաժանում”, “միավորում”: Նույն գլխի շրջանակներում ատենախոսը փաստում է, որ փոխադարձ բայերը՝ հարաբերակցվելով փոխադարձ դերանունների հետ ձեռք են բերում նոր իմաստ, ինչպիսիք են՝ «հուզականություն», «հաղորդակցում», «ֆիզիկական ազդեցություն», «նմանակում» և այլն: Գլխի վերջում, ինչպես նաև ամբողջ շարադրանքի ընթացքում հետազոտության արդյունքները ամփոփվում են համապատասխան աղյուսակներով, ինչը, իհարկե, արժանի է գովասանքի, քանի որ վերջիններս ընդհանրացված ձևով ամփոփում են հետազոտության տվյալները զուգադրության լույսի ներքո:

Եզրակացության բաժնում ատենախոսը ամփոփում է իր հետազոտության արդյունքները հակիրք եզրակացությամբ:

Գնահատելով այն դրականը, որ անկասկած ունի իր մեջ սույն ատենախոսությունը, ցանկանում ենք կանգ առնել որոշ թերությունների և վիճարկելի դրույթների վրա:

1. Աշխատանքում երբեմն հանդիպում ենք անհաջող ձևակերպումների, ինչպիսիք են. «տվյալ լեզվաբանական ուղղությունը...միտքած էր քերականական սահմանափակումներ կատարելու...» (Էջ 26), «...հնթական գործողությամբ ազդում է

ինքն իր վրա» (էջ 52), «...ինչը նվազեցնում է ուղիղ խնդրի շարահյուսական պաշտոնը» (էջ 67), «ավանդական քերականական կառուցներ» (էջ 81):

2. Աշխատանքում գտնում ենք որոշ եզրույթների ոչ ճշգրիտ թարգմանության դեպքեր: Այսպես, հաշվի առնելով ներքոհիշյալ տեսությունների էությունը՝ «Bounding theory» եզրույթը պետք է թարգմանաբար լինի «Շարահյուսական տեղաշարժի սահմանափակումների տեսություն», այլ ոչ թե «Հարկադրանքի տեսություն», «Binding theory»՝ «Համավերաբերման տեսություն» (էջ 26), այլ ոչ թե «Միավորման տեսություն» (էջ 26), «c-command»՝ «բաղադրիչների հարաբերակցելիություն» այլ ոչ թե «սհրահանգ» (էջ 27):
3. Հաջորդ դիտողությունը վերաբերում է որոշ օրինակների ոչ ճշգրիտ ընտրությանը: Խոսելով անդրադարձ դերանունների՝ բարդ նախադասությունների շրջանակներում իրենց հարաբերյալներից զատ կիրառության մասին՝ ատենախոսը մեջբերում է «*Himself a good carpenter, he discussed with them the efficiency of some tools...*» և «*Itself a splendid specimen of classic art, it has been exhibited throughout the world*» օրինակները, որտեղ «*himself a good carpenter*» և «*itself a splendid specimen of classic art*» ոչ թե բարդ նախադասության կազմի մեջ մտնող բաղադրիչ-նախադասություններ են, այլ բացարձակ անվանական ստորոգական կառուցներ (absolute nominative construction) (էջ 76): Անհիմն ենք համարում *itself* դերանվան՝ որպես ստորոգելիական վերադիրի շարահյուսական պաշտոնում սահմանումը «*Mrs Vincent was kindness itself*» նախադասությունում (էջ 77), որտեղ նշյալ դերանունը հանդես է զալիս սաստկական գործառույթում և, հետևաբար, շարահյուսական պաշտոն չի կարող ունենալ:
4. Աշխատանքում հանդիպում ենք որոշ օրինակների վիճարկելի մեկնաբանություններ: Այսպես, վերագրելով անդրադարձ կառուցներին մի շաբթ գործարանական իմաստներ, ինչպիսիք են՝ «առօրյա գործողություն կատարելու կարողություն կամ անկարողություն», «հատուկ առիթով նախատեսված գործողություն», ատենախոսը որպես օրինակ է բերում համապատասխանաբար «*Is she old enough to dress herself yet?*» (էջ 83) և «*Once a year Barfoot will dress himself in the elegant and expensive clothing of a gentleman courtier*» (էջ 85) նախադասությունները: Գտնում ենք, որ նշված իմաստները ի հայտ են զալիս տվալ նախադասություններում կիրառված այլ միավորների բառային իմաստների շնորհիվ:

Նշված թերությունները չեն նսեմացնում ատենախոսության արժեքը և զիտականությունը: Զուգադրության լույսի ներքո այն անշուշտ ընդլայնում է անդրադարձության և փոխադարձության բայական իմաստային կարգերի վերաբերյալ տեսությունը:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության մեջ ներկայացրած տեսակետներին և եզրակացություններին, իսկ ատենախոսության հիմնական դրույթները համապատասխանաբար արտացոլված են հրապարակումներում: Այս ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ Լորետա Արայի Բագիկյանը արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանին և միջնորդում ենք Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար Լեզուներ» մասնագիտական խորհրդին նրան շնորհելու այդ աստիճանը:

Գրախոս՝ Վ. Բրյուսովի անվան պետական

համալսարանի լեզվաբանության և հաղորդակցման

տեսության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.

Հաստատում եմ դոցենտ Վ. Վելյանի ստորագրությունը:

Վ. Բրյուսովի պետական համալսարանի գիտքարտության՝



14.03.2022

Վ.Ա.Վելյան

Հ. Փիլակջյան